թիւններն, անշուշտ, պահելով, Սաֆօ Յակոբեանը շարունակողն է իր տա-դանդաւոր հայրենակից Քրիստափոր Կարա-Մուրզայի գործի: Կարա-Մուրզան առաջինը եղաւ, որ ազգային ու ժողովրդական երգը Կովկասում դարձրեց ընտանիքի ու հանրային հաւաքոյթների սեփականութիւն եւ նանապարհ բաց արաւ Կոմիտասների համար: «Սիփան» նոյն դերը կատարեց, աւելի համեստ պայմաններում, փարիզահայ գաղութի մէջ: Յուսանք, որ իր կեանքի նոր շրջանում էլ «Սիփան»-ը կը շարունակէ իր հիմնադրի աւանդութիւններն ու նպատակները եւ կը մնայ ժողովրդական լայն զանգուածների սիրելին:

ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ԵՒ ԵԱՎՈՐՈՎԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Օգոստոս 18-ին, Բուլգարահայ գաղութը ժողովրդական ջերմ խանդավառութեամբ հանդէսներ կատարեց հայ մեծանուն յեղափոխական Քր. Միքայէլեանի մահուան երեսնամեակի եւ բուլգար նշանաւոր բանաստեղծ Փէիու Եավորովի արձանի բացման առթիւ: Արձանը, գործ արձանագործ Գ. Ահարոնեանի, կառուցած է հայերի նախաձեռնութեամբ եւ հաւաքած միջոցներով: Եավորովը նշանաւոր է իր *«Արմենցի»* (Հայերը) ոտանաւորով, որ երբէ հայերի համար թանգ է իր բովանդակութեամբ, բուլգար գրականութեան մէջ յայտնի է, որպէս գեղարուեստական մեծարժէք գործ, բուլգար բանաստեղծութեան գոհարներից մէկը: Առաջ ենք բերում այդ ոտանաւորը բանաստեղծ Արմէն Սեւանի թարգմանութեամբ:

ՀԱՑԵՐ

Հալածուածներ թշուառ, չնչին բեկորներ՝
Ժողովուրդի մ'արի, այսօր նահատակ,
Ահաբեկ ու գերի մօր մը զաւակներ,
Զոհեր՝ անհունօրէն վսեմ քաջութեան,
Հայրենիքէն հեռու օտար երկնի տակ,
Հիւծած, գունատ, հաւաքուած տուն մը խարխուլ,
Կըմպեն, ու իրենց կարիւնի սիրտը՝ վէրքէն·
Կերգեն, ինչպէս երգն՝ արցունքին ընդմէջէն:

Անոնք կերգեն· կուգեն մոռնալ՝ հարբելով՝
Հին տառապանքն ու ցաւերը այսօրուան,
Ցիշատակը խեղդել հրաշունչ գինիով,
Քընացընել հոգին ջախջախ կրծքին տակ,
Կուգեն՝ հակած գանկերուն մէջ անհետի
Տառապագին պատկերն անոր մայրական·
Կուգեն անոր օգնութեան կանչը վերջին
Ա՛լ չը լսել, մոռացութեան մէջ գինով:
Հօտ մը՝ ինչպէս գազանք մը հալածուած,